

յոյս կայ որ այդ աշխատասէր և խաղաղ ազգաբնակութեան տասնեակ տարիների թափած ջանքերը,—որոնց շնորհիւ այդ կողմերի հողերի կապալազինը տասնապատկուել է, ինչպէս և բանուորավարձը, և Անդրկովկասի արդիւնաբերութեան մի ճիւղ տալիս է մօտ 10 միլլիոն եկամուտ,—կը գնահատուեն, հարցը արդար լուծում կը ստանայ և թիւրքահայը ստիպուած չի լինի կրկին, պանդխտութեան ցուպը վերցրած, նոր հողեր որոնել իր գլուխը պահելու համար...

Լ. Ս.

30 մարտի:

Յ. Գ.—Արդէն շարուած էր մեր այս տեսութիւնը, երբ ստացանք «Кавказъ» թերթի ապրիլի 1-ի թիւը, որի մէջ տըպուած է հետեւեալ կարևոր պաշտօնական հաղորդագրութիւնը.

Կովկասեան երկրի ազգաբնակութեան

ես ստացել եմ մարտի 30-ին Կովկասում Նորին Կայսերական Մեծութեան փոխարքայ գեներալ-ադելտանտ կոմս Ի. Ի. Վորոնցով-Շաշկովից հետեւեալ հեռագիրը.

«Թագաւոր Կայսրի կամքով ես կոչուած եմ կանգնելու ինձ թանկագին Կովկասի կառավարութեան գլուխը: Ափսոսում եմ որ ինձ վիճակւում է ստանձնել իմ պարտականութիւնները այն ժամանակ, երբ ամեն օր ստացւում են լուրեր բարեկեցութեան խանգարման, խառնակութիւնների, աւարառութիւնների և ամեն տեսակ բռնութիւնների մասին: Ինչպէս հին զինուոր, ես անկարելի եմ համարում պատերազմական ժամանակում հրաժարուել ծառայելու կոչից. այդ անելիս ինձ զօրավիգ է երկրի լիակատար խաղաղացման և արդիւնաւոր զարգացման խոր յոյսը: Ես հաւատի եմ կովկասեցիների հաւատարմութեան դէպի Թագաւոր Կայսրը, որի համար բոլոր տեղական ազգաբնակութիւնները հաւասարապէս մօտ են և թանգ: Դիմում եմ բոլոր բնակիչներին առանց դաւանանքի և ազգութեան խտրութեան աշակցելու հայրենի երկրի բարեբախտ վերաշինութեան: Որպէս զի երկրում ներմուծուի կարգը խաղաղ ճանապարհով, անհրաժեշտ է բոլոր հասարակական ոյժերի օգնութիւն: Ես հաւատում եմ ժողովրդի իմաստութեան և համոզուած եմ, որ ազգաբնակութեան անհանգիստ մասը չի դիմանայ բարեմիտ ահագին մեծամասնութեան միահամուռ հասարակական գրոհի առաջ: Ինձ Նորին

Կայսերական Մեծութիւնից տրուած ցուցմունքների համաձայն՝ ես պիտի ժողովեմ ազգաբնակչութեան ներկայացուցիչների խորհրդակցութիւններ, ուր պէտք է մտնեն ընտրուածներ ազնուականութիւնից, քաղաքներից և գիւղական հասարակութիւններից, ինչպէս և պրաւօսլաւ, հայ-լուսաւորչական և մահմեդական հոգեւորականութիւններից: Խորհրդակցութիւններին առաջարկուելու է արտայայտուել այն միջոցների մասին, որ անհրաժեշտ է ձեռք առնել ամեն տեսակ աւագակութիւններ, աւարառութիւններ և անկարգութիւններ վերջացնելու համար, պարզելու, թէ որչափ փոփոխութեան կարիք է զգացում այժմ երկրում գործադրուող դատաստանական կարգ ու սարքի մէջ, քննելու զեմաստվային հիմնարկութիւնների կանոնադրութեան կիրառման կերպերի հնարաւորութիւնը և նպատակայարմարութիւնները: Բացի այդ, ես պէտք է ձեռք առնեմ ինձնից կախուած բոլոր միջոցները արագացնելու հողերի սահմանաչափութիւնը, ինչպէս և պարզելու ամենից շատ հողի կարօտութիւն ունեցող բնակիչների տարաբնակչութեան համար արքունական պիտանի, առձեռն պատրաստ հողաբաժինների իսկական տարածութիւնը: Ի՞նչ յարգանքս Ամենայն հայոց Կաթողիկոսի ամենահպատակ աղբրսի, հայոց եկեղեցուն պատկանող կալուածները արքունական կառավարութեան յանձնուելու գործը Բարձրագոյն հրամայուած է վերաքննել:

Ես հաւատացած եմ, որ պետական հիմնարկութիւնների մէջ բոլոր ծառայողները կը համակուին համոզմունքով, որ ներկայ ծանր ժամանակ ծայրայեղօրէն անհրաժեշտ է խզի մտօք առանձնապէս լարել իրանց ոյժերը, հասնելու համար բոլորին ցանկալի բարեբախտութեան, ի նկատի ունենալով Կովկասի զարգացումը և բարօրութիւնը Կայսրից իմ անուանով տուած ընկրիպտի մէջ աւանդած հիմքերի վրայ:

Կոմս Վորոնցով-Դաշկով

Յայտնելով զրա մասին, արտայայտում եմ հաստատ վրասահութիւն, որ Կովկասեան երկրի ազգաբնակչութիւնը լիովին կը գնահատի Կովկասեան Փոխարքայի ներկայ հաղորդագրութեան ամբողջ կարեւորութիւնը: Առաջ բերուած հեռագրով յայտնւում է, որ մօտիկ ապագայում երկրի մէջ լինելու են արմատական վերանորոգութիւններ, որոնք կը շրջափեն տեղական

կեանքի ամենակարևոր կողմերը և կ'իրագործուեն ազգաբնակչութեան մերձաւորագոյն մասնակցութեամբ, ի դէմս նրա ներկայացուցիչների՝ առանց կրօնի, ազգութեան և դասակարգերի խտրութեան: Այդ դժուար աշխատանքի սկզբնաւորութեան և նրա աջողակ կատարման համար անպայման հարկաւոր է հասարակական կեանքի հանգիստ ընթացքը, որպէսզի ինքը ազգաբնակչութիւնը, առանց մի կողմ գրաւուելու ներկայ խառնակութիւններով, կարողանայ անարգել քննել իր կարիքները և դիտակցարար վերաբերուել առաջիկայ աշխատանքին: Ուստի ես հրաւիրում եմ ազգաբնակչութիւնը ի հանգստութիւն, կարգ և կատարումն օրէնքի, որպէսզի աւելի ևս շուտով հաղորդակից անուի Կովկասեան երկիրը ներքին վերաշինող աշխատանքին՝ այն սկզբունքներով, որ աւանդուած են բարձրագոյն ընկերիպտեւորով, փետրուարի 18-ին՝ ներքին գործերի մինիստրի անունով և փետրուարի 26-ին՝ Կովկասեան Փոխարքայի անունով:

Կովկասի քաղաքացիական մասի Կառավարչապետի պաշտօնակատար և Կովկասեան ղեկավարական շրջանի ժամանակաւոր Հրամանատար
գեներալ-լէյտենանտ Մալամա

31-ին Մարտի 1905 թ., Թիֆլիս:

Ուրեմն բացուած է այն նոր կեանքի արշալոյսը, որին անհամբեր սպասուած է Կովկասը...

Բարձրագոյն ընկերիպտ գններալ-ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկովի անունով.

Կոմս Իլլարիօն Իվանովիչ Այն ժամանակից, երբ Կովկասը մտցրուեց ռուսական պետութեան կազմի մէջ, Իմ Պսակակիր Նախորդների և Իմ նպատակն է եղել այդ երկրում խաղաղութեան, բարօրութեան և կարգի զարգացումը մեր հայրենիքի միւս մասերի սերտ միութեան հիմունքներով: Այդ կողմից հասած առաջադիմութիւնը, որ արտայայտուել է Կովկասեան ազգաբնակչութեան բարօրութեան ընդհանուր աճումով և Կովկասի շատ ընդհանրի աչքի ընկնող աշխատանքներով յօգուտ և ի պատիւ Ռուսիայի, ի ցաւ Իմ՝ վերջին ժամանակս մոայլուեց առանձին ազգութիւնների փոխադարձ ընդհարումներով, իշխանութիւններին չհնազանդուելու դէպքերով, անկարգութիւններով, որոնք խանգարեցին կեանքի անդորր հոսանքը: Այդ բոլոր անկարգութիւններին ժամանակաւոր երևոյթների նշանակութիւն տալով, անհրաժեշտ եմ համարում անյապաղ վերականգնել Կովկասում անդորրութիւն, որպէս զի այդ երկիրը հաղորդակից անեմ ներքին վերաշինող աշխատանքին, որ այժմ

ձեռնարկուում է մեր տէրութեան մէջ իմ նախագծումների համեմատ: Այդ նպատակներով ես Ձեզ նշանակում եմ իմ Կովկասեան փոխարքայ: Այդ երկրի Ձեր ծանօթութիւնը, որ դուրս էք բերել նախընթաց ծառայութիւնով Կովկասում, բազմակողմանի պետական փորձառութիւնը և հայրենիքի օգտին կատարած աշխատանքը Խնձ հաստատ վստահութիւն են տալիս, որ այժմ Ձեր առաջ դրուող նպատակը դուք աջողութեամբ կ'իրականացնէք հանդիպելով համերաշխ աջակցութեան՝ Կովկասի ազգաբնակչութեան բոլոր դասակարգերի և ազգութիւնների բարեմիտ մարդկանց կողմից:

Իսկական իրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրուած է Նիկոլայ:

Ցարսկոյէ Մելօ

26 փետրուարի 1905 թ.

Բարձրագոյն անուանական ուկազ Կառավարիչ Սենատին

Բարուդը համարելով վերականգնել Կովկասեան Մեր Փոխարքայի պաշտօնը իր բոլոր իշխանութեան լիակատար ամբողջութեամբը, այն վայրերի սահմաններում, որոնք այժմ գտնուում են Կովկասի կառավարչապետի, Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատարի և Կովկասեան կազակ զօրքերի նախագնի ատամանի վարչութեան տակ,—հրամայում ենք. 1) Մեր Կովկասի Փոխարքային յատկացնել իրան յանձնուած երկրի քաղաքացիական վարչութեան բոլոր մասերի բարձրագոյն իշխանութիւնը:

2) Ըստ իր կոչման՝ Փոխարքան լինելու է պետական խորհրդի, մինիստրների խորհրդի և կոմիտէտի անդամ, Փոխարքայութեան սահմաններում գտնուող զօրքերի զլխաւոր հրամանատար, և Կովկասեան կազակ զօրքերի նախագնոյ ատաման:

3) Նրան յանձնուած երկիրը կառավարելու գործին օգնելու համար՝ հիմնել Փոխարքայի երկու օգնականների պաշտօն—զինուորական և քաղաքացիական, անմիջապէս ենթարկելով նրանց Փոխարքային:

4) Փոխարքայի բացակայութեան դէպքում, զինուորական մասի նրա օգնականը վարում է Փոխարքայի պաշտօնը:

5) Մեր տուած ցուցումները զարգացնելու համար Կովկասի Մեր Փոխարքային պարտաւորեցնել կազմել օրէնքներ այդ Փոխարքայութիւնը կառավարուելու համար:

6) Մինչև այդ օրէնքների (5-դ կէտում յիշուած) հրա-

տարակութիւնը պէտք է գործեն. ա) Փոխարքայի վերահասութեան ենթակայ առարկաները, նրա իրաւունքները և պարտականութիւնները դէպի այն հիմնարկութիւնները, որոնք գտնուում են Կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետի, Կովկասի զինուորական շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատարի և Կովկասի իրաւասութեան տակ՝ որոշել համաձայն 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19-դ յօդուածների Կովկասի և Անդրկովկասի օրէնքների (օրէնքների ժողովածուի, հատ. II 1876 թուի հրատարակութիւն), թողնելով Փոխարքային այն բոլոր լիազօրութիւնները, որ այժմ ունեն Կովկասի վարչութեան յիշուած պաշտօնեաները, բ) Փոխարքայի զինուորական բաժնի օգնականին յատկացնել Կովկասի զինուորական շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատարի իրաւունքները, գ) Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականին յատկացնել այժմեան կովկասեան քաղաքացիական բաժնի կառավարչապետի իրաւունքները, դ) կառավարչական վայրերը և պաշտօնական անձերը, ինչպէս Կովկասի գլխաւոր վարչութիւնը, այնպէս էլ տեղական վարչութիւնները պէտք է գործեն այժմ գոյութիւն ունեցող հիմքերով, որոնք բացատրուած են Կովկասի օրէնքների մէջ (օրէնքների ժողովածու, հատոր II. հրատարակութիւն 1892 թուի):

7) Վերացուած են Կովկասի կառավարչապետի և Կովկասի զինուորական շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատարի, նոյնպէս և նրա օգնականի պաշտօնները:

Թող կառավարիչ սենատը ձեռք առնէ այս կարգադրութիւնը իրագործելու համար անհրաժեշտ միջոցները:

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է Նի401Ա.

Ցարսկոէ Մեյս

26 փետրուարի 1905 թ.

Բագուի սարսափելի դէպքերը դեռևս շարունակում են լարուած դրութեան մէջ պահել հայ-թուրքական յարաբերութիւնները. ամենաջնջին դէպքից առաջանում է Բագուում և Նրեւանում սարսափ: Ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը երբէք այնքան չի զգացուել մեր երկրում, ինչպէս այդ արիւնալի անցքերից յետոյ: Մարդ սոսկում է կարդալով այն մանրամասնութիւնները որ պատմում են ոռոսականատեսները մայրաքաղաքի թերթերում (Շ. Օ.) Բագուի դէպքերի մասին... Հասարակական կարծիքը սպասում է որ Բագու քաղաքի և նահանգի վրայ նշանակուած սենատոր Կուզմինսկու քննութիւնը կատարուի լայն հրապարակական հիմքերով, որպէսզի կատա-

րեալ անաչառութեամբ երևան հանուեն այդ սարսափելի վայրագութիւնների բուն պատճառները և կազմակերպողները, որոնց մէջ մինչև այժմ լոյս տեսած վկայութիւններով, որոշ դեր են կատարել տեղական պոլիցիակաւանների հետ և թուրք ուսուցիչները... Միայն կատարեալ վստահութիւնը՝ որ յանցաւորները կը ստանան արժանի պատիժ և արմատախիլ կ'անուին նրման դէպքերի կրկնութեան հնարաւորութիւնները—կարող է լիովին հանգստացնել երկրիս խաղաղ ազգաբնակչութիւնը:

—Մեր կեանքը աւելի արդար և խելացի հիմքերով վերաշինելու հասարակական լայն հոսանքը՝ որ համակում է ամբողջ պետութիւնը իր կենդանարար շունչով, տոգորեց և գործակատարների դասը թիֆլիսում: Կարճատև գործադուլից յետոյ գործարանատէրերի (խողէին) և գործակատարների (պրեկաշիկ) մէջ կայացաւ համաձայնութիւն հետեալ կէտերում. 1) Պարապմունքների ժամանակը՝ առաւօտեան ժամի 8-ից մինչև երեկոյեան ժամի 6-ը անընդհատ. ամեն մի գործակատար ճաշի համար ստնում է 1 ժամ. 2) առաջին անհրաժեշտութեան պիտոյքներ ծախող մագաղիները կարող են բաց լինել ժամի 7-ից մինչև 7 ը. 3) առևտուր անել առանց սակարկութեան, յաճախորդներին կանչելու սովորութիւնը թողնել և գործակատարներին տոկոսներով վարձատրութիւն տալը վերացնել. 4) մի տարուց աւել ծառայած անձինք, երբ լուրջ կերպով հիւանդանում և զրկւում են իրանց պաշտօնը կատարելու կարողութիւնից, ստանում են մի ամսուայ ոտճիկ և տեղից չեն զրկւում. 3 տարի ծառայածները հիւանդութեան դէպքում ստանում են 2 ամսուայ ոտճիկ, իսկ 5 և աւել տարիներ ծառայածները—4 ամսուայ ոտճիկ. 5) մի տարուց ոչ պակաս ծառայած իւրաքանչիւր գործակատար տարուայ ընթացքում իրաւունք ունի երկու շաբաթ արձակուրդ ստանալ, առանց ոտճիկից զրկուելու. 6) առանց յարգելի պատճառների արձակուած գործակատարը պիտի ստանայ վարձատրութիւն. եթէ մի տարուց պակաս է ծառայել—մի ամսուայ, եթէ մի տարուց աւել է ծառայել—երկու ամսուայ ոտճիկ. 7) ճաշի կամ ճաշի փողի հարցը պիտի վճռեն խանութատէրերը և գործակատարները փոխադարձ համաձայնութեամբ. 8) խանութատէրերի և գործակատարների փոխադարձ յարաբերութիւնները պիտի լինեն բաղաժալակ. 9) գործադուլ արած բոլոր գործակատարները պիտի ընդունուեն նորից ծառայութեան մէջ և ոտճիկ ստանան գործադուլի օրերի համար:

—Մեր երկրի մամուլի աշխարհում կատարուել են հետեւեալ փոփոխութիւնները անցած ամսուայ ընթացքում.

Միրզա-Ջալալ-Մահմէդ Կուլիեւլին թոյլատրուած է Թիֆլիսում հրատարակել թուրքերէն լեզուով հեռագիրներ թէ Ռուսական և թէ Պետերբուրգի գործակալութիւններէ: Ա. Ս. Գուլաձէին թոյլ է տրուած Թիֆլիսում իր խմբագրութեամբ հրատարակել վրացերէն լեզուով մի ամենօրեայ լրագիր, նախնական ցենզուրայով, «Նօրատի» (Նուէր) անունով: Թոյլատրուած է հրատարակել Թիֆլիսում մի նոր հայերէն ամենօրեայ լրագիր, ենթակայ նախնական ցենզուրայի: Խմբագիրը լինելու է պ. Գ. Մելիք-Ղարաբեօգեանը. լրագրի անունն է «Բամբեր Կովկասի»: Թիֆլիսում այժմ հրատարակուող «Кавказскій Листокъ» և «Телефонъ» լրագիրների խմբագիրներին թոյլատրուած է հրատարակել իրանց լրագիրները ընդարձակուած ծրագրով:

Տիկ. Լիսիցեանին թոյլատրուած է «Հասկեր» մանկական ամսագրի հրատարակութիւնը: